ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության Թեման՝ Ակտիվ ուսուցման մեթոդների դերն ու նշանակությունը Մայրենի առարկայի դասավանդման ընթացքում

Հետազոտող Ուսուցիչ՝ Վարսենիկ Քալաշյան

Դպրոց՝ Երևանի հ. 120 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Ելենա Ջիլավյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Տիտղոսաթերթ 1

Բովանդակություն 2

Ներածություն 3

Գլուխ 1. Ինչ է մեթոդը և ինչ են իրենցից ներկայացնում ուսուցման ակտիվ մեթոդները 5

Գլուխ 2. ՈՒսուցման ակտիվ մեթոդների առանձնահատկությունները , սկզբունքները և դասակարգումը 7

Գլուխ 3. Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը դասի տարբեր փուլերում 9

Գլուխ 4. Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն 16

Եզրակացություն 18

Օգտագործվող գրականության ցանկ 20

Ներածություն

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ակտիվ մեթոդների կիրառման գործընթացում առկա հիմնախնդիրների ուսումնասիրմամբ: Արդիականության համար հիմք է հանդիսանում սոցիալական պատվերը, որն ուղղված է մանկավարժական գործընթացի բարեփոխմանը ժամանակի պահանջներին համապատասխան: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ արդի դպրոցի նորարական միտումներից մեկը սովորողների ստեղծագործական մտքի զարգացումն ու խրախուսումն է, ինչը հնարավոր է դառնում նաև մայրենիի դասավանդման ընթացքում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, քանի որ կրթական համակարգի պահանջներն ու ժամանակակից փոփոխությունները թելադրում են ակտիվ մեթոդների հրատապությունն ու կարևորությունը ուսուցման ընթացքում՝ բարելավվելով որակը նորարարական գործունեության բովանդակային տարրերի ներդրմամբ՝ կրթության որակին ներկայացվող արդի պահանջների բավարարման, յուրաքանչյուր աշակերտի կրթական պահանջմունքների դրսևորման, կրթամշակութային գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Քանի որ վերջին շրջանում նկատվում է սովորողների ուսման հանդեպ դրդապատճառների նվազման տենդեց, որն իր հերթին հանգեցնում է կրթության որակի անկմանը, այդ պատճառով կարևորվում է ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման դերն ու նշանակությունը ուսման որակի բարձրացման, աշակերտների հետաքրքրությունը դասի հանդեպ, նրանց ակտիվ մասնակցության, մտածողության զարգացման գործընթացին:

Այս պարագայում հիմնախնդիրը սովորողների թերի ձևավորվածությունն է, որը պետք է լրացվի ուսուցման անձնակողմնորոշիչ տեխնոլոգիայի՝ ակտիվ մեթոդների կիրառման միջոցով:

Հետազոտության **նպատակն է՝**

- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները և դրանց զարգացման առանձնահատկությունները, գիտելիքի ձեռք բերման գործընթացում նրանց ակտիվ մասանակցությունը:
- Ուսումնասիրել ուսուցման ակտիվ մեթոդները:
- Անդրադառնալ դրանց կիրառմանը դասի տարբեր փուլերում:

- Բացահայտել դրանց կիրառման առանձնահատկությունը մայրենիի դասաժամերին:
- Ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունը դասաժամերին:
- Աշխատանքի նպատակներից բխում են հետևյալ **խնդիրները՝**
- Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների իմացական կարողությունները:
- Ներկայացնել իմացական կարողությունների դերն ու նշանակությունը:
- Նպաստել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորմանն և զարգացմանը:

Ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ զարգանում է սովորողների ոչ միայն գիտելիքները, կարողություններն ոհմտությունները, հետաքրքրությունը դասի հանդեպ, այլ նաև զարգանում է մտածողությունը,ինքնուրույն աշխատելու, համագործակցելու կարողությունը:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման դեպքում աշակերտը ակամա դառնում է դասապրոցեսի ակտիվ մասնակից:

Հետազոտությունները ցույց են տվել՝

Երբ ինչ-որ բան են կարդում ՝ հիշում է 10 տոկոսը:

Երբ ինչ-որ բան են տեսնում ՝ հիշում է 20 տոկոսը:

Երբ ինչ-որ բան են տեսնում ՝ հիշում է 30 տոկոսը:

Երբ ինչ-որ բան տեսնում են և լսում են՝ հիշում է 50 տոկոսը:

Իսկ, երբ ինչ-որ բան ինքնուրույն են անում՝ հիշում է 90 տոկոսը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նոր մեթոդների, մոտեցումների իրագործմանը, այն է՝ ակտիվ մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

Հետազոտության կազմակերպմանը նպաստել են թեմայի շուրջ եղած մասնագիտական գրականության ուսումնասիրումը, դասաժամերին իմ կողմից կիրառված մեթոդները, հարցումը և դրանց ամփոփումը:

Գլուխ 1. Ինչ է մեթոդը և ինչ են իրենցից ներկայացնում ուսուցման ակտիվ մեթոդները

Մեթոդը հանդիսանում է նպատակին հասնելու միջոց, գործիք ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության ընթացքում: Այն իրար է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնարդյունքը, որում կարևոր է մեթոդների ճիշտ ընտրություն և կիրառության կարողություն:

«Ուսուցման ակտիվ մեթոդներ» տերմինը գրականության մեջ հայտնի է 20-րդ դարի 60-ականների սկզբին: Յու. Եմելյանովը այն օգտագործում է սոցիալ-հոգեբանական կրթության համակարգում օգտագործվող մեթոդների հատուկ խումբ բնութագրելու համար: Այն հիմնված է մի շարք սոցիալ-հոգեբանական էֆեկտների և երևույթների օգտագործման վրա, որտեղ տեղի է ունենում սովորողների ակտիվ մարզում: Ակտիվ մեթոդները սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև է, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ ակտիվ մասնակիցներ: Սովորողներն ու դասավանդողները հավասար իրավունքների դաշտում են: Ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է ժողովրդավարական ոճին:

Ակտիվ ուսուցման մեթոդները հնարավորություն են տալիս ձևավորել ակտիվ անհատականություն ժամանակակից հաջողակ մարդու բոլոր անհրաժեշտ հմտություններով և որակներով՝ փոխելով սովորողի պասիվ դիրքը ակտիվի: Այսինքն, ակտիվ մեթոդները սովորում են ակտիվությամբ: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպեց օրենք, որում ասվում է, որ ուսուցումը ենթադրում է զարգացում, քանի որ մարդը զարգանում է գործունեության ընթացքում, ուսուցչի կողմից ղեկավարվող գործունեության մեջ, որտեղ սովորողները ձեռք են բերում իրենց հետագա մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

Ակտիվ մեթոդները նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությանը, որոնք ենթադրում են մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: Ուսուցման ակտիվ մեթոդների օգտագործումը հնարավորություն է տալիս աշակերտին որոշումներ կայացնել, երևակայությունը զարգացնել, խոսքը և հիշողությունը զարգացնել, լսելու

հմտություն ձևավորել, համագործակցային թիմ ձևավորել, համարձակություն, ինքնավստահություն ներշնչել իր անձի հանդեպ: Ակտիվ ուսուցման մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը ուսուցչի և աշակերտի, նաև՝ աշակերտների միջև, որտեղ զարգանում է աշակերտի խոսքը: Ակտիվ մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն մտածելու և տրամաբանելու գործունեության մեջ: Ակտիվ մեթոդներն այնպիսի մեթոդներ են, որոնցում սովորողների գործնեությունը կրում է արդյունավետ, ստեղծագործական, հետախուզական բնույթ: Ուսուցումն ավելի հաջողված կլինի, եթե յուրաքանչյուր կանոն, երևույթ, ուղեկցվի օրինակների օպտիմալ քանակով, որպեսզի բավականաչափ պարզ դառնա, թե որքան բազմազան է դրա կիրառումը:

Սխեմա 1. Ակտիվ Մեթոդ



Փաստորեն, ուսուցման ակտիվ մեթոդների կիրառումը նպատակ ունի ակնկալվող արդյունքների ապահովում՝

- Տրամաբանական մտածողության զարգացում,
- Գիտելիքը կիրառելու ունակություն,
- Համագործակցային աշխատանք:

Ճիշտ է, ակտիվ մեթոդների կիրառման ժամանակ բոլոր աշակերտները մասնակցում են դասին, միևնույն ժամանակ դրանք հնարավորությունն են տալիս բացահայտելու յուրաքանչյուրի գիտելիքներն ու իրական կարողությունները: Սակայն ուսուցիչը ևս պետք է ցույց տա իր հմտությունը. նա պիտի իմանա յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները և կիրառի տարբերակված ուսուցում: Հաջողության հասնելով՝ աշակերտը դառնում է ավելի վստահ, մեծանում է ավելին իմանալու և դասին ակտիվորեն մասնակցելու ցանկությունը:

Գլուխ 2. ՈՒսուցման ակտիվ մեթոդների առանձնահատկությունները , սկզբունքները և դասակարգումը

Ակտիվ ուսուցման մեթոդների առանձնահատկություններն այն են , որ դրանք հիմնված են գործնական և մտավոր գործունեության մոտիվացիայի վրա, առանց որի առաջընթաց չկա գիտելիքների յուրացման գործում:

Ակտիվ ուսուցման մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրությունների գործածության հետ:

Քանի որ ուսուցման ակտիվ մեթոդների հիքում ընկած է աշակերտի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, նրա ակտիվ մասնակցությունը, ապա՝

- Աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով:
- Աշակերտն ապավինում է ոչ այնքան իր հիշողությանը, որքան ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մտածողությանը:
- Աշակերտին հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար:
- Աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական կարողություններ:
- Նյութի յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերելու, ամփոփելու, ակտիվացնելու և կիրառելու սովորածը:
- Ստեղծվում է ինքնակրթության միջավայր, ձևավորվում է ինքնակատարելագործման ձգտում:

Ակտիվ ուսուցման մեթոդների առանձնահատկություններից է սովորողին խնդրահարույց իրավիճակի մեջ մտցնելը, որից դուրս գալու համար նա ստիպված է ինքն իրեն ակտիվորեն ձևավորել նոր գիտելիքներ՝ հենվելով իր և ընկերների, կենսափորձի, տրամաբանության և ողջախոհության վրա:

Ակտիվ ուսուցման մեթոդները առաջացնում են շատ ավելի խորը և իմաստալից արդյունքներ, քան առավել ավանդական ուսուցման գործընթացները: Դա տեղի է ունենում ինչպես տվյալների և փաստերի փորձ կատարելիս, այնպես էլ նոր հմտություն կամ վերաբերմունք կիրառելիս:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է՝

- Սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ,
- Ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար,
- Սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները՝ խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումն ունի նաև իր սկզբունքները, որից էլ կախված է դասի արդյունքները՝

- Ուսուցիչը բացատրում է սպասվելիք աշխատանքի նպատակը, քննարկվող հարցերը:
- Բաժանում է բոլոր աշակերտներին խմբերի, հիշեցնում խմբում աշխատելու կանոնները, տալիս հանձնարարություններ, նշում աշխատանքի կատարման տևողությունը:
- Բոլոր մասնակիցները հավասար են:
- Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել ցանկացած հարցի վերաբերյալ:
- Աշխատանքի մեջ պետք է ներգրավված լինեն բոլորը:
- Ոչ մի սովորող չի քննադատվում:
- Պետք է հոգալ մասնակիցների հոգեբանական պատրաստվածության մասին. խոսքը գնում էնրա մասին, որ ոչ բոլոր մասնակիցներն են հոգեպես պատրաստ ներգրավվելու այս կամ այն աշխատանքի մեջ: Այս առումով օգտակար է գովել սովորողին ակտիվ մասնակցության, ինքնադրսևորման համար:
- Ուսուցիչը պարբերաբար ակտիվացնում է սովորողների համագործակցությունը, հանում մասնակիցների միջև առաջացած լարվածությունը, եթե այն առակա է:
- Քննարկման ժամանակ անկանխատեսելի դժվարությունների դեպքում ուսուցիչը միջամտում է:
- Ակտիվ օգտագործվում է տեխնիկական ուսուցման միջոցներ՝ սլայդներ, ֆիլմեր, տեսահոլովակներ:
- Հաղորդակցությունը իրականացվում է ուսուցչի կողմից ձևակերպված կանոններին համապատասխան:

Գլուխ 3. Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը դասի տարբեր փուլերում

Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում `

- **Ձևավորել նոր գիտելիքներ**
- **Ձևավորել հաղորդակցական հմտություններ**
- **Սովորողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան**
- **Սովորողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու հարցում:**

Մեթոդների բազմազանությունը հնարավորություն է տալիս ուսուցչին կիրառել դրանք դասապրոցեսի ցանկացած հատվածում: Մեթոդներից են՝ Խճանկար, Ձնագնդի, Բանավեճ, Փոխներգործուն նշանների համակարգ, Գաղափարների քարտեզագրում, T-աձև աղյուսակ, Գործնական և դերային խաղեր, Պրիզմա, Վենի դիագրամ, Մտածիր_ զուգորդիր_ մտքեր փոխանակիր, Կրկնակի գրառումների օրագիր, Գուս, Մտագրոհ, Պրիզմա, Խմբավորում, Աշխատանք փոքր խմբերով, Մանրապատում, ուղեղի փոթորիկ, Կլոր սեղան, Կիսատ նախադասություն, Երկու բան, Վարդ_փուշ _բողբոջ, Գիտելիքի դոմինո, Կենտրոններով աշխատանք , Ֆրայերի մոդել, Մանրապատում և այլն …:

Արդյունքի հասնելու համար ուսուցիչը պետք է ճիշտ ընտրի մեթոդը և ճիշտ կիրառի դասի փուլերում: Դրա համար պետք է լավ ուսումնասիրել թեման, առանձնացնել դասի նպատակները՝ դրանց մեջ նշելով նաև ակնկալվող արդյունքները: Քանի որ ակտիվ մեթոդները ուսուցման գործընթացում ունեն բազմաֆունկցիոնալ նշանակություն, ուստի, դրանք պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և անհրաժեշտ ճանաչողական ակտիվությունը: Օրինակ՝ խթանման փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողի գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, նրանց մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Ակտիվ մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում՝ Մտագրոհ, Պրիզմա, մտածիր_ զույգ կազմիր_ քննարկիր, Հինգ րոպեանոց շարադրանք, Ձնագնդի, ԳՈՒՍ, Խորհրդավորություն, Գուշակություն,

Ուղեղի փոթորիկ, Զարմանք,_անսպասելիություն, Գաղափարների քարտեզագրում և այլն:

Նշված մեթոդներից մի քանիսի նկարագրություն.

Մտագրոհ՝Թեման՝ **Կռվարարները**

Գատախտակին գրում եմ՝,,Երբ են մարդիկ վիճում,,նախադասությունը: Հարցի պատասխանը աշակերտները գրում են իրենց մետ եղած ինքնակպչուն թղթերի վրա՝ լրացնելով անավարտ նախադասությունը՝ «Մարդիկ կռվում են, երբ…»: Աշակերտներն աշխատելու են զույգերով, լսելու են միմյանց կարծիքները, հետո լրացնելու են նախադասությունը:Աշխատանքի համար հատկացնում եմ երեք րոպե: Վերջացնելուց հետո թղթերն ամրացնում են գրատախտակին; Երեխաներն ընթերցում են իրենց գրածը: Ապա երեխաներին ուղղում եմ հարցեր, որոնց պատասխանները տալու համար կարող են վերհիշել Ես և շրջակա աշխարհը առարկայի դասաժին իրենց անցած համապատասխան թեման:

- Ինչ կարելի է անել կռիվը դադարացնելու համար:
- Երբ է կռիվը վերածվում վեճի:
- Ինչպես եք անվանում այն մարդկանց, որոնք անընդհատ կռվում են:

Վերջին հարցին պատասխանելով ասում եմ, որ այսօրվա դասի վերնագիրն է

Կռվարարները: Վերնագիրը գրում եմ գրատախտակին,ապա աշակերտները բացում են դասագրքերը և դիտում են նկարը:

Օգտագործելով **Գուշակություն** մեթոդը աշակերտներին հանձնարարում եմ գուշակեն տեքստի բովանդակությունը և կատարեն ենթադրություններ: Աշակերտներին տալիս եմ հարցեր:

- Ձեր կարծիքով ովքեր են կռվարարները:
- Երբ կարող են ամպերը կռվել:
- Կռվելուց հետո ինչ կատարվեց:

Երեխաներին ասում եմ, որ տեքստն ընթերցելուց հետո պարզ կդառնա իրենց գուշակությունները:

Մեթոդի կիրառման ժամանակ ստեղծագործական մտածողութունն անցնում է երեք փուլով՝ մտքերի գեներացիա, մտքերի վերլուծություն և գնահատում, մտքերի կիրառում կոնկրեր իրավիճակներում: Մեթոդի նպատակը աշակերտների ուշադրությանը տվյալ նյութի վրա կենտրոնացնելն էր:

Որպես **գուշակության մեթոդի** ևս մեկ օրինակ ներկայացրել եմ հետևյալ աշխատանքը.

«Դռները բացեք, գարուն է եկել» թեմայի մուտքի ժամանակ գրատախտակին գծել եմ գնացքի առաջնային մասը՝ կազմված չորս մասից: Ընտրել եմ գարնան վերաբերյալ չորս հանելուկ, որոնց պատասխանները գրել եմ կլոր սեղանին դրված թերթիկների վրա՝ երեխաների աչքից հեռու (թերթիկները նախօրոք համարակալել եմ): Այդ բառերն են՝ ձնծաղիկ, բողբոջ, ծիծեռնակ, կանաչ:Աշակերտները գտնում են յուրաքանչյուր հանելուկի պատասխանը և հաջորդաբար փակցնում գրատախտակին գծված գնացքի մասերի վրա՝ համապատասխան թվանշանի վրա: Այնուհետև աշակերտներից մեկը փակցված թերթիկները շրջում է ներքևից վերև և ստանում է **Գարուն** բառը: Որից հետո սեղանին դնում եմ թերթիկներ, որոնց վրա գրված են գարնանը վերաբերող և չվերաբերող բառեր նաև բառակապակցություններ՝ արև, մեղուներ, ձնհալ, թռչունների վերադարձ, երփներանգ ծաղիկներ, Ձմեռ պապ, տոնածառ և այլն: Ապա անցկացնում եմ **մտագրոհ մեթոդը:** Աշակերտներին հարցնում եմ, թե որ բառերն են կապված գարուն բառի հետ (այս ձևով պարզում եմ սովորողների իմացական մակարդակը): Հինգ աշակերտ, հաջորդաբար, մոտենում է և սեղանից վերցնում իր որոշած թերթիկը, ցույց տալիս ընկերներին: Եթե ճիշտ է ընտրել, ապա փակցնում է գնացքի առաջնային մասից հետո՝ որպես գնացքի վագոն: Այս ձևով ստանում են գնացքի հերթական վագոնները: Աշակերտները կարդում են փակցված թերթիկները և ասում, թե գարունն իր հետ ինչեր է բերում:

Աշխատանքն ավարտելուց հերո սովորողները վագոնների բառերով և բառակապակցություններով կազմում են գարնան վերաբերյալ պատմություն:

Աշխատանքի ընթացքում սովորողներն ակտիվ էին, աշխատում էին մեծ սիրով և հաճոյքով:

Խորհրդավորություն՝ Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են որպե առաջ բացահայտել գաղտնիքը: Հետևաբար, երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ՝ «Ես մտքումս մի բան եմ պահել»: Այն վերաբերում է մեր ուսումնասիրած թեմաներից մեկին:Դուք պետք է ինձ հարցեր տաք: Ես հարցերին կարող եմ պատասխանել միայն «այո» կամ «ոչ» տարբերակով: Դուք պետք է հարցերն այնպես ձևակերպեք, որ «այո» կամ «ոչ» պատասխանը ձեզ օգնի հասկանալ, թե ինչ եմ «մտապահել»:

Թեման է՝ **Կաքավի գովքը.** Աշակերտները պետք է գտնեն **կաքավ** բառը: Աշակերտների հարցերին պատասխանում եմ **այո** կամ **ոչ** բառերով:Երեխաները հնչեցնում են տարբեր հարցեր՝ Թռչունը չվող է:Թռչունը գիշատիչ է: Փետուրները միագույն են: Ձայնը գրավիչ է: Ոտքերը փոքրիկ են , Երգող թռչուն է: Մարմինը սև է: Գեղեցիկ է: Խատուտիկ է: Կտուցը փոքրիկ է: Իր մասին երգ կա գրված: Բոլոր **այո** պատասխանները գրում եմ գրատախտակին:

Ձայնը գրավիչ է: Ոտքերը փոքրիկ են: Երգող թռչուն է:Ոտքերը փոքրիկ են: Գեղեցիկ է: Խատուտիկ է: Իր մասին Կոմիտասը երգ է գրել:

Քանի որ երեխաները Ես և շրջակա աշխարհը առարկայից անցել են թռչունների մասին թեմա, որտեղ ցույց եմ տվել նաև կաքավի նկարը, հիշում են և կարողանում են գտնել **կաքավ** բառը: Երեխաներին ասում եմ **.**

-Այո, ձեր պատասխանը ճիշտ է**:**

Գրատախտակին փակցնում եմ կաքավի նկարը, այո հարցերի պատասխանները ստուգում են նկարի միջոցով, ապա լսում են Կոմիտասի Կաքավիկ երգը, կարողանում են խմբով երգել կրկներգը, իսկ իմաստի ընկալման ժամանակ, բանաստեղծությանը նայելով, երգում են երգն ամբողջությամբ:

Մեթոդներ, որոնք հարմար է կիրառել դասի իմաստի ընկալաման փուլում. Փոխներգործուն նշանների համակարգ, Գործնական և դերային խաղեր, Խճանկար, Կլոր սեղան, Գիտելիքի դոմինո, Կենտրոններով աշխատանք, Նախագծային մեթոդ, T-աձև աղյուսակ, որը կարելի է կիրառել դասի տարբեր փուլերում, Շրջագայություն պատկերասրահում, Վենի դիագրամ, Մանրապատում և այլն :

T-աձև աղյուսակ՝ մեթոդական ճկուն միջոց է, որը կիրառվում է միևնույն հասկացության, միևնույն խնդրի երկու կողմերը՝ դրական կամ բացասական, համեմատելու համար:

Մեթոդը **կիրառել եմ «Անձնազոհություն»Ք դասի ժամանակ:**

Խմբերին բաժանել եմ թերթիկներ, որոնց վրա գրել եմ՝ **բացասական կողմերը, դրական կողմերը,** մյուս թերթիկների վրա դրական կամ բացասական բառերի փոխարեն գրել եմ՝ **շան տերը,** իբրև դրական կողմ և **նավապետը՝** իբրև բացասական կողմ: Խմբերից մյուսները, օգտվելով տեքստից, գտել և գրել են **անձնազոհություն** բառին բնորոշ հատվածը: Ավարտելուց հետո ներկայացրել են կատարված աշխատանքները:

Փոխներգործուն նշանների համակարգ՝ Արդյունավետ մեթոթոդ է, որն օգնում է սովորողին կարդալու ընթացքում վերահսկել սեփական ընկալումը:

Կարդալու ընթացքում արած նշանները ծառայում են որպես տեղեկատու՝ հաստատված կամ հերքված պատկերացումներն ի հայտնաբերելու համար:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում՝ Մտքերի հոսք, Ֆրայրերի մոդել, Գիտելիքների դոմինո, Երկու բան, Փաստերի բուրգ, Մտածող գլխարկների մեթոդ և այլն:

Մտածող գլխարկների մեթոդ. Ստեղծում եմ հինգ խումբ գույների ընտրությամբ՝ դեղին, սպիտակ սև, կապույտ, կարմիր: Սովորողները վերցնում են նշված գույնի թղթերը, գտնում են, թե այդ գույնի գլխարկը որ սեղանին է դրված և նստում են շուրջը:Դասի թեման է Լուսիկն ու Սուսիկը: Աշխատանքը կատարելու համար տրամադրում եմ հինգ բոպե:

Գլխարկների վրա գրել եմ կիսատ նախադասություններ, բառակապակցություններ, հարցեր, որոնք պետք է շարունակեն՝ օգտվելով տեքստից:

Դեղին գլխարկ՝ Լավ է որ…

Սպիտակ գլխարկ՝ Կարևոր է, որ…

Սև գլխարկ՝ Վտանգավոր պահերը

Կապույտ գլխարկ՝ Ինչին հասավ մայրիկը:

Կարմիր գլխարկ՝ Ումով կամ ինչով հիացա:

Ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է աշխատանքը, մյուս խմբերը լսում են, հարկ եղած դեպքում կատարում են ուղղումներ կամ լրացումներ:

Ֆրայերի մոդել՝ Սա շատ արդյունավետ մեթոդ է սովորածը պարզելու համար:

Սխեմա 2. Ֆրայերի Մոդել



Առարկայի մասին ձեռք բերված գիտելիքները պարզելու համար սավորողներին բաժանում եմ չորս խմբի: Գրատախտակին գծված քառաբաժանի կենտրոնում նշել եմ **առարկա** բառը, վերևի ձախ անկյունում՝ **սահմանում** բառը,ներքևի ձախ անկյունում՝ **օրինակներ** բառը, վերևի աջ անկյունում՝

պատկեր-նկար-գծագիր բառերը,իսկ ներքևի աջ անկյունում՝ **հակաօրինակներ:** Առաջին խմբին առաջարկել եմ իմ տված թերթիկի վրա գրել առարկայի մասին իրենց իմացածը կամ սահմանել հասկացությունը իրենց բառերով: Երկրորդ խումբը իրենց առջև դրված պատկերներից պետք է ընտրեն և թերթիկի վրա փակցնեն միայն առարկա ցույց տվող բառին համապատասխան նկարը, կարող են նաև իրենք նկարեն իրենց ուզած առարկան:

Երրորդ խումբը պետք է իրենց առջև դրված բառերի ցանկից ընտեն և գրեն միայն առարկա ցույց տվեղ բառերը:

Չորրորդ խումբը պետք է իրենց առջև դրված ցանկից առանձնացնի և թերթիկի վրա գրի այն բառերը, որոնք առարկա ցույց չեն տալիս. այսինքն գրում են հակաօրինակներ:

Աշխատանքն ավարտելուց հետո, որին տրամադրել եմ հինգ րեպե, քառաբաժանի իրենց հստվածում,հաջորդաբար,փակցնում են թերթիկները ,ստուգվում է յուրաքանչյուր խմբի աշխատանքը:

Խմբավորում մեթոդը կիրառել եմ թեմայի ամփոփման ժամանակ:Դասի թեման է «Երկնքից երեք խնձոր ընկավ» :Գրատախտակին պյունակներում գրել են թեմայի բոլոր դասերի վերնագրերը՝ Իրիկուն, Երեք արջի հեքիաթը, Սուտասանը, Ինչպես է շունը մարդուն ընկեր դարձել, Պոչատ աղվեսը: Թեմայի դասանյութերից ընտրել և թղթերի վրա գրել եմ սովորած բառերը, բառակապակցությունները, առածները և դրել կլոր սեղանի վրա: Աշակերտները զույգերով մոտեցել են սեղանին, վերցրել են մեկ թերթիկ, որոշել են նշվածը որ դասանյութում են հանդիպել (նստած աշակերտները ստուգել են) և մագնիսով փակցրել են գրատախտակին՝ համապատասխան դասի վերնագրի պյունակում: Եթե աշակերտը չի կարողացել հիշել և տեղադրել թերթիկը համապատասխան պյունակում, նստած աշակերտներն են գտել դասի վերնագիրը, մոտեցել գրատախտակին և փակցրել: Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր դասի պյունակում նշվածները կարդացել են և վերհիշել, կազմել են նախադասություններ, մեկնաբանել են առածների իմաստը: Ապա աշակերտներին հարցրել եմ, թե որն էր թեմայի իրենց սիրելի դասանյութը: Աշակերտների մեծամասնությանը դուր էր եկել «Պոչատ աղվեսը» որն էլ ցանկացան ևս մեկ անգամ պատմել: Պատմեցին հետևալ ձևով. Թղթերի վրա գրել էի՝ հեղինակ, արտի մոտ, կովի մոտ, աղվեսի խնդրանքը տատիկին, աղբյուրի մոտ, աղջկա մոտ, չարչի, կալվոր, աղբյուր, հավիկ: Տասը աշակերտ մոտենում է և սեղանից վերցնում է որևէ թերթիկ: Ապա ասում եմ, որ գտնեն իրենց տեղերը և

կանգնեն ըստ հեքիաթի դեպքերի հաջորդականության: Երեխաները սխալ տեղում կանգնած ընկերոջն օգնում էին Ճիշտ տեղում կանգնել: Կանգնելուց հետո յուրաքանչյուր աշակերտ պատմել է իր թերթիկի հատվածը: Այսպես, իրար շարունակելով, պատմել են հեքիաթի բովանդակությունը, որոշ աշակերտներ, իրենց ցանկությամբ, կիրառել են նաև դերային խաղ: Նստած աշակերտները վերջում կատարել են լրացումներ:

Անդրադարձի ժամանակ օգտագործվող մեթոդներ. Կիսատ կամ անավարտ նախադասություն, Տասը տարի անց, Վարդ- փուշ-բողբոջ**:**

Կիսատ նախադասություն՝ Մեթոդը նպաստում է սովորողների արագ մտածողության զարգացմանը, գիտելիքների յուրացմանը:

- Ես այսօր սովորեցի ... :
- Ինձ զարմացրեց ... :
- Այսօրվա դասի ամենաօգտակար կամ կարևոր բանը... :
- Ինձ հետաքրքրեց... :
- Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ ... :
- Մի բան, որ չհասկացա ... :
- Մի բան, որ **կուզեի** ավելին իմանալ ... :
- Այս դասից հետո ես զգում եմ ...
- Այս դասից ավելին կսովորեի, եթե ... :

Կիսատ նախադասությունների լրացումը կարող է առաջադրվել այնպես, որ սովորողը ինքը ընտրի որևէ նախադասություն և լրացնի: **Վարդ-փուշ-բողբոջ՝**

- Վարդ՝ Նշեք մեկ բան, որ լավ հասկացել եք:
- Փուշ՝ Նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարաց ար:
- Բողբոջ՝ Նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր մի տք ծագեց:

Գլուխ 4. Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն

Կապված ակտիվ մեթոդների կիրառման հետ, 2022-2023 ուստավա ընթացքում անցկացրել եմ հարցումներ ծնողների և դասվարների շրջանում:

Հարցմանը մասնակցել են իմ դասարանի 32 ծնող և 5 դասվար: Սոցիոլոգիական հարցման միջոցով պարզել եմ, թե որ մեթոդներն են ավելի արդյունավետ օգտագործել մայրենիի դասաժամերին՝ ավանդական ,թե՝ ակտիվ:Պետք է նշեմ, որ մեթոդների կիրառման ժամանակ, բազմիցս, կատարել եմ լուսանկարներ և տեղադրել եմ ֆեսբուքյան իմ էջում, որոնք դիտել են ծնողները: Նրանց համար պարզ էր , թե ինչ ակտիվությամբ և ոգևորությամբ են մասնակցում իրենց երեխաները դասաժամին, հարցեր են ուղղել նրանց՝ կատարած աշխատանքների մասին :

Հարցաթերթիկում նշված հարցերը նույնն են եղել ծնողների և ուսուցիչների համար: Անցկացրել եմ նաև համեմատություններ՝ նպատակ ունենալով պարզելու հարցերի պատասխանները:

Արդյունքներ

Հարցման նպատակն է պարզել, որդյոք ուսուցման ակտիվ մեթոդները նպատակահարմար է կիրառել մայրենիի դասավանդման ընթացքում, թե՝ ոչ ,և որքանով է ընդունելի դասվարների և ծնողների կողմից:

1-ին հարցաթերթիկ. Ձեր կարծիքով մայրենիի դասաժամերին ավելի նպատակահարմար է օգտագործել ավանդական, թե ակտիվ մեթոդներ, թե՝ երկուսն էլ:



2-րդ հարցաթերթիկ. Այժմ դասվարներն ավելի շատ որ մեթոդներն են օգտագործում մայրենիի դասավանդման ընթացքում:



3-րդ հարցաթերթիկ. Արդյոք արդյունավետ եք համարում ակտիվ մեթոդների կիրառումը մայրենիի դասավանդման ընթացքում:



Եզրակացություն

Կարևորելով դասավանդման գործընթացում ուսուցչի ակտիվ մեթոդներով աշխատելու փորձառությունը, **բացահայտեցի և համոզվեցի**, որ դրանց օգտագործումը հնարավորություն է տալիս դասն արդյունավետ կազմակերպելու, որն էլ նպաստում է սովորողների մտածողության զարգացմանը, դասի նկատմամբ հետաքրքրության աճին:

Կատարելով հետազոտությունը, եկա հետևյալ եզրահանգումներին՝ ուսուցման ակտիվ մեթոդների դերն ու նշանակությունը մեծ է առարկայի դասավանդման գործում: Նախկին՝ ավանդական մեթոդների համեմատ ավելի արդյունավետ են, դա փաստ է (դա է վկայում դասաժամերին կիրառելով նշված մեթոդները): Ակտիվ մեթոդներն օգնում են սովորողների մոտ զարգացնել զանազան սոցիալական հմտություններ, սակայն փաստ է նաև այն, որ ուսուցչից պահանջում է լայնածավալ աշխատանք: **Կարևորեցի** այս աշխատանքը, որի արդյունքում ակտիվ մեթոդներով դասավանդելը ավելի հետաքրքիր ու հեշտ են դարձնում դասի ընկալումը, սովորողները չեն ձանձրանում և անընդհատ նոր տեղեկատվության են սպասում: Այսինքն՝ ակտիվ ուսուցման մեթոդներն ուղղված են սովորողներին ներգրավելու ինքնուրույն ճանաչողական գործունեության զարգացմանը: Սովորողների մոտ **զարգացավ** հետաքրքրություն ցանկացած խնդիր լուծելու նաև ձեռք բերված գիտելիքները կիրառելու հանգամանքը:

Հետազոտության ընթացքում **պարզեցի,** որ ակտիվ մեթոդները հետաքրքրություն են առաջացնում սովորողների գիտելիքի ձեռք բերման հանդեպ, ձևավորում են հաղորդակցական, անձնական գրագիտություն :

Ակտիվ ուսուցման մեթոդներով աշխատում ենք որպես ուղեցույց, և սովորողները ստանձնում են իրենց ուսումնական ճանապարհորդությունը: Հաճախակի կիրառելով մեթոդները, **համոզվել եմ,** որ այս կերպ սովորեցնելը հանգեցնում է դասին ավելի լավ սովորողների ներգրավվելուն, նրանց ուշադրությունը պահելու համար: Սովորողների մեծամասնության մոտ ձևավորվեց հետաքրքրություն և ակտիվություն դասի հանդեպ: Աշակերտները դարձան դասի լիարժեք մասնակիցներ: Նրանց շատերի մոտ փոխվեց և մեծացավ հավատը սեփական ուժերի և հնարավորությունները գնահատելու հանդեպ, ինչն էլ խթանում է նրանց ստեղծագործական ունակությունների

զարգացմանը, համագործակցությանը, փոխըմբռնմանը: Աշակերտները ներգրավված են և առաջադրանքներ կատարելով և մտածելով իրենց սովորածի մասին:

Հանրակրթության ոլորտում կրթական համակարգի ընդհանուր բարեփոխումների գործընթացում կարևորում եմ ժամանակակից ակտիվ մեթոդների իմացությունն ու կիրառումը մայրենիի դասաժամերին՝ նաև նյութի գրագետ և հայեցի մատուցումը:

Այսպիսով՝ **կարևորում եմ** նաև այս աշխատանքը այնքանով, որ ուսուցման ակտիվ մեթոդների կիրառման արդյունքում սովորողներն ինքնուրույն գնում են դեպի գիտելիքների ուղին և այն յուրացնում են մեծ սիրով և մեծ ծավալով: **Նրանք ուզում են սովորել:**

Օգտագործվող գրականության ցանկ

- Սիսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ. Բարձրագույն դպրոցի մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2015թ.
- Якунин В. А. Современные методы обучения в высшей школе. СПб, 1991.
- Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն, առարկայի ուսումնական փաթեթ
- Ակտիվ ձևեր և դասավանդման մեթոդներ, http: //k 67. Mskcollege. Ru.
- Կորնեևա Է. Ն. Սոցիալ _հոգեբանական կրթության ակտիվ մեթոդներ, 2009 թ.
- Սմոլկին Ա. Մ. Ակտիվ ուսուցման մեթոդներ, 1991թ.
- https://||b. armedu.am> https: // hy. wikipedia. org> wiki